

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃՍԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ԱԿՍՆԸ ԲԱԿՈՒՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ն. Վ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ակսել Բակունցը նորագույն շրջանի հայ գրականության ամենախցնատիպ և անկրկ-
նելի մեծություններից է, որի արձակը կարողաիս հալվում, անէւանում են արձակի և չա-
փածոյի սահմանները, թվում է, թե գեղեցկության և «արքայական խոսքի» անզուգական
նմուշների են հանդիպել:

Բակունցի արձակը հայոց լեզվի գեղեցկության և բառազանձի ճոխության, լեզվական
անթերի մշակույթի բարձրագույն նմուշ է մեր գրականության մեջ, արձակ, որն ընթերցն-
լիս հաճախ մոռանում են այս կամ այն դեպքի նկարագրությունը՝ հափշտակվելով լեզ-
վական անկրկնելի գեղեցկություններով: Գրողի լեզվի այդպիսի հրաշալիքներից են խոսքի
իմաստն ու նշանակությունը ընդգծող, նրա հուզականությունը ուժեղացնող շարահյուսա-
կան միջոցները:

Յուրաքանչյուր գրող առջանորդվում է մայրենի լեզվում արմատացած շարահյուսական
օրենքներով ու կանոններով: Սակայն հիմք ընդունելով լեզվում եղած շարահյուսական
հիմնական նորմերը՝ ստեղծագործողը ամենևին չի սահմանափակվում դրանցով: Այստեղ
ևս դրսևորվում են գրողի անհատական ոճի առանձնահատկությունները:

Բակունցի ստեղծագործությունների (տվյալ դեպքում՝ պատմվածքների) մեջ շատ են
հանդիպում նախադասությունների այնպիսի կառույցներ, որոնք թեև մասամբ շեղվում են
լեզվական օրինաչափություններից, բայց կարևոր են գեղարվեստական խոսքում հեղինա-
կային բազմազան նպատակադրումներ իրագործելիս. այն է՝ հերոսների հուզաշխարհի
որևէ նրբերանգի բացահայտում, կերպարների խոսքի անհատականացում և այլն: Բակունցի
հեղինակային խոսքում այդպիսի շարահյուսական-ոճական կառույցներ են կրկնությունը,
գեղչումը (էլիպսիս), շրջադասությունը, ճարտասանական հարցը և այլն, որոնք բնորոշ
են ամենից առաջ գրողի անհատական ոճին: Միաժամանակ դրանք հատուկ են ժողովրդ-
դահոսակցական լեզվին, և հեղինակի խոսքում դրանց տեղին ու վարպետ գործածությունը
վկայում է, որ նա հարազատ է մնացել կենդանի լեզվի տարերքին՝ ճշմարտացի ու պատ-
կերավոր ձևով վերարտադրելով կյանքը:

Խոսքը բանաստեղծականացնող լեզվա-ոճական այս միջոցները նաև գրողի պատ-
կերավոր մտածողության արդյունք են, խոհի, պատկերի արտահայտման բնական ձևն ու
եղանակը, կյանքի ընկալման նրա կերպը, որն ամեն անգամ ինքնատիպ է և անկրկնելի,
միայն իրեն հատուկ:

Բակունցը կարողացել է լեզուն ծառայեցնել իր հիմնական խնդրին՝ աշխարհի և մար-
դու գեղարվեստական վերարտադրությանը: Այդ է պատճառը, որ նրա լեզվում այնքան
ուժեղ է պատկերավորությունը, կենդանի պատկերներ ու բնական գույներ ստեղծելու հըմ-
տությունը: Հեղինակը կարողացել է մարդկային հոգեվիճակների, երևույթների ու առաջ-
կաների մեջ տեսնել դիպուկն ու բնորոշը, որոնք այնքան հուզիչ են դարձնում նրա խոս-
քը, մեծացնում խոսքի հավաստիությունն ու ներգործության ուժը:

Գրողի արձակին բնորոշ են ուժեղ քնարականությունը և բանաստեղծականությունը,
այդպիսին էր նրա վերաբերմունքը կյանքի նկատմամբ: Միշտ է նկատել Ռ. Իշխանյանը,
երբ գրել է. «Բակունցը այն ոչ մեծ թվով հայ դասական գրողներից է, որոնք միմիայն
արձակ են գրել ու չնայած դրան հայ ամբողջ արձակի մեջ Բակունցի ստեղծագործու-
թյունը առանձնանում է իր շեշտված բանաստեղծականությամբ»¹:

Բակունցի արձակի բանաստեղծականությունը պայմանավորող շատ կարևոր շարա-
հյուսական միջոց է կրկնությունը՝ իր տարատեսակներով, որ, ինչպես գիտենք, ավելի

¹ Ռ. Իշխանյան, Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965, էջ 13:

բնորոշ է չափածո խոսքին: Լեզվա-ոճական այս հնարանքից հմտորեն օգտվում է գրողը՝ իր պատմվածքներին հաղորդելով բանաստեղծական ուժեղ շունչ և նուրբ երածշտակա-նություն:

Գրողի անհատական ոճի առանձնահատուկ կողմերից է պատմվածքի սկզբում և վերջում միևնույն պատկերի կրկնությունը: Դա ինքնանպատակ չէ: Կրկնության այդ տեսակի հաճախակի օգտագործումը ունի ոճական մեծ նշանակություն. նույն պատկերի կրկնությունը սրում է զգացմունքայնությունը, բորբոքում ընթերցողի երևակայությունը և հուզաշխարհը, թույլ չի տալիս, որ ընթերցողը անտարբեր լինի կատարվածի հանդեպ: Որոշ դեպքերում այն ներքին խոր իմաստ և կենսափոփոխություն է պարունակում. «Որանջիս» պատմվածքն առանձնանում է այդպիսի կրկնություններով: Այն սկսվում է ձորակի պատկերմամբ. «Օրանջիսի ձորակում ամեն գարնան մասրենիներն են ծաղկում, բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ» (77)²: Հուզական ուժեղ լիցք է ստանում գրողի խոսքը, նույն տրամադրությամբ համակվում է նաև ընթերցողը, երբ վերջում հանդիպում է նույն պատկերի կրկնությանը՝ մի փոքր ձևափոխությամբ. «... Հետո քամին սերմեր բերեց, և Մանասի տան ավերակների վրա ծաղկեց մասրենին: Ամեն գարնան Օրանջիսում այնքա՜ն վարդեր են լինում, դեղին, սպիտակ» (81): Հեղինակի խոսքի բանաստեղծական տպավորությունը ավելի է ուժեղանում այնպիսի ոճական հնարանքի գործածությամբ, ինչպիսին է բառերի սովորական շարահասարակ փոփոխությունը (շրջահասարակություն): Առաջին օրինակում վարդերը որոշյալի լրացումներից մեկը նախադաս է գործածված, մյուս երկուսը՝ նտադաս՝ մեծացնելով խոսքի արտահայտչականությունը: Եվ այսպ՝ գրողը դիմում է նաև գլխավոր անդամների նախ սովորական, հետո շրջուն շարահասարակության՝ ոճական նույն նպատակով. «Մասրենիներն են ծաղկում» և վերջում՝ «Ծաղկեց մասրենին»: Ուշագրավ է նաև, որ ենթական և ստորոգյալը առաջին օրինակում հոգնակի թվով են դրված, իսկ երկրորդում՝ եզակի:

Լեզվա-ոճական այս միջոցների վարպետ զուգակցումը գրողի խոսքը դարձնում է ախորժալուր ու պեսպես, նուրբ մեղեդայնություն հաղորդում նրան: Պատմվածքի սկզբնամասում և վերջնամասում ծաղկած մասրենիների և վայրի վարդերի հանդես գալը ոճական մեծ արժեք ունի և շատ խորիմաստ է. գեղեցիկ է բնությունը, նրա գեղեցկությամբ հափշտակված է մարդը, բայց հենց այդ գեղեցկությունն էլ դառնում է բնության սիրահար ազնիվ հոգիների կործանման պատճառ, որովհետև խոր հակադրություն կա մարդկային երազների ու իրականության միջև, և դաժան կյանքը իր կամքն է թելադրում մարդկանց:

Պատմվածքի սկիզբը և վերջը զարդարող կրկնություններով խառնակապես հարուստ է հակումցի «Ան ցեղերի սերմնացանը» ժողովածուն, ուր գրողը զբաղվում է մարդկային հոգու թաքուն ծայրերի ու գաղտնարանների, կենսական ճշմարտությունների քննությամբ, որը նրա գրական տաղանդի և լեզվական վարպետության մի նոր աստիճան է նշանակություն. «Այս գրքում նա դրսևորում է իր ձիրքի երեք գլխավոր հատկանիշները՝ նրբագեղություն, դրամատիզմ և բնականություն: Ակսել հակումցը նրբագեղությամբ և դրամատիզմին ավելացնում է ջերմ քնարականությունը, որն անշուշտ, որոշ չափով հարվածում է արձակի էպիկական ձևերին, բայց բերում է խոր հուզականություն, ընթերցողին անմիջապես ներքաշում գեղարվեստական հյուսվածքի տարերքը...»³: Եվ պատահական չէ, որ այս ժողովածուի տասը պատմվածքներից հինգը առանձնանում են կրկնության վերոհիշյալ տեսակի հմուտ գործածությամբ: Կարելի է համոզված ասել, որ սա հակումցի ամենասիրած ոճական հնարանքներից է, և արտահայտման բանաստեղծական այդ ձևը բնորոշ է նրա գեղարվեստական մտածողությանը:

Ահա «Ծիրանի փողը» պատմվածքը, որը հեղինակային վերհուշ է (սա էլ ոճական յուրօրինակ հնարանք է և պատումին հաղորդում է բնականություն՝ պարուրված քնարականությամբ): Վերհուշը դառնում է իրական, իսկ հեղինակի խոսքը՝ հուզաթաթախ, շնորհիվ հետևյալ կրկնության. «Ես թերթում եմ ուղեգրությունների իմ տետրը և նրա էջերի արանքում գտնում եմ սուսամբարի երկու տերև՝ չոր ու գորշ, ինչպես հանգած մոխիր» (107): Սրան հետևում է գրողի պատմությունը՝ Եղեռնից մի կերպ փրկված, բայց իր հայրենիքի կարոտը վառ պահող հերոսի՝ Հազրոյի մասին, որն իր վիթխարի ծիրանի փողով, առանց «հին աֆի և նոր խնդրությամբ», հնչեցնում է մեր արդար երգերը իր նոր հայրենիքում: Պատմվածքի սկզբնամասում հանդես եկած պատկերը փոքր-ինչ փոփոխված կրկնվում է վերջում՝ տպավորիչ դարձնելով խոսքը. «Ես գոցում եմ ուղեգրության իմ տետրը, նրա մեջ սուսամբարի երկու տերև՝ գորշ ու չոր, ինչպես հանգած մոխիր» (118):

² Օրինակները քաղված են՝ Ա. հակումց, Երկեր, Երևան, 1955: Այսուհետև՝ հղումը շարադրանքի մեջ:

³ Հր. Քամրազյան, Գրական դիմանկարներ, հոդվածներ, Երևան, 1975, էջ 89:

Ընթերցողն էլ հեղինակի հետ վերապրում է կատարվածը: Այստեղ կրկնությամբ նրբորեն միահյուսվում է ետադասման հնարանը:

Տերև գոյականի լրացումներից «երկուր» գործածելով նախադաս, իսկ «գուրջն» ու «չորը» ետադաս՝ հեղինակը բազմազանություն է հաղորդում խոսքին, շեշտում նրանցից յուրաքանչյուրի իմաստն առանձին: Ի դեպ ասենք, որ լեզվա-ոճական մի քանի հնարանքների համատեղ գործածությունը խոսքի միևնույն հատվածում բնորոշ է հակունցի անհատական ոճին և լեզվամտածողությանը:

Բովանդակային մեծ խտացում և փիլիսոփայություն է պարունակում «Այսիական մանուշակ» պատմվածքի սկզբում և վերջում կրկնվող պատկերը: Պատումի սկիզբը մեզ գրավում է հետևյալ պատկերով. «Մաղկափուշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը ծիրանագույն քուրաստան» (189): Ընթերցողը հուզվում է և ասվածից շատ ավելին հասկանում, երբ հանդիպում է այս նույն պատկերի կրկնությամբ նաև պատմվածքի վերջում. «Բուրմունքից արքեցած մի բզեզ քնել էր անէջքների մեջ և նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ քուրաստան է, այսիական մանուշակ...» (97): Իմաստն այն է, որ չպետք է շլանալ միայն կյանքի արտաքին փայլով, հարկավոր է տեսնել իրական կյանքը, որը լի է ցավերով ու դրամաներով. քաղո է կյանքը, ժամանակ ունեցեք բանալու կյանքի անէջքները և տեսնելու իրականությունը, ուր տիրում է անձայր թշվառություն և անվերջ դրամա, որն այնպես էլ չհասկացան հնագետն ու բնության գեղեցկությանը գմայված նկարիչը:

Բակունցի ռեալիզմը նոր որակ է ստանում «Այստակ ձին» պատմվածքում, ուր մարդկային կյանքի և հոգու ճշմարտությունները բացահայտվում են համապատասխան ոճական միջոցներով, որոնցից մեկն է կրկնությունը: Բնորոշ կրկնությամբ գրողը ներկայացնում է Ծարմաղ բիրտ հոգեվիճակը: Ամեն անգամ, երբ գնում էին եկեղեցու զանգերը, պատավի անանձնական անդորր ու հրճվանք էր ապրում, նա գոհ էր աստծուց այդ խաղաղության ու հանգստի համար. «Երկար ու կերկեր, իբրև արևելյան թախտոտ երգ, ճոճում էր հին դուռը» (198): Լսելով «սև» խրճիթներին քոթ գուժող գզրի ձայնը՝ Ծարմաղ բիրին երես է դարձնում աստծուց, նրա հոգում տակնուվրա է լինում այն ամենը, ինչին անդավաճան հավատացել էր իր ողջ կյանքում: Եվ հեղինակն ամփոփապես բնական գույներով վերարտադրում է նրա հոգու խռովքը հետևյալ հակադրությամբ. «Դուռը դժգոհ վրա դրեց, և դուռը չերգեց երկար ու կերկեր, այլ դժգոհ վնգսուսց պատավ շան նման» (199): Պատե-րազմը գրկում է Սիմոնի ընտանիքին (նաև բազում ընտանիքների) ապրուստի միակ միջոցից: Մարդկային թշվառությունն ու «անեզրական տիրությունը» մեկ անգամ ևս ընդ-գծվում են դրան թախտոտ երգի կրկնությամբ. «Ծարմաղ բիրին սարսուռով վրա դրեց դուռը և հին դուռը մի անգամ էլ երգեց երկար ու կերկեր, արևելյան թախտոտ մի երգ» (215):

Գրվածքի սկզբում և վերջում հանդիպող միևնույն պատկերի կրկնությունը բնարականությամբ և նորը ապրումներով է ողողում «Միրհավ» պատմվածքը, որը սկսվում և վերջանում է այսպես. «Աշուն էր, պայծառ աշուն...», որից էլ սկիզբ է առնում ողջ վեր-հուշը: Այս պատկերով բնության հավերժությամբ հակադրվում է մարդկային կյանքի ան-ցողիկությունը: Աշնան պատկերի կրկնությունը նաև տեսանելի է դարձնում աշնանային ջինջ օրը, կյանքը սիրող և այդ կյանքին հրածեշտ տվող Դիլանին, նրա սիրո պատմու-թյունը:

«Սև ցեների սերմնացանը» պատմվածքն ամփոփապես լարում է ընթերցողի հետաքրք-րությունը գրվածքի սկիզբը զարդարող երկխոսությամբ, որը նույնությամբ կրկնվում է նաև վերջում՝ հուզականորեն շիկացնելով և բնական դարձնելով խոսքը.

«Ես հարցնում եմ Ավագին.

— Մնում է այն վարագույրը:

— Մնում է:

— Իսկ մայրը...

— Մայրը դեռ հավատում է»:

Խոսքի արտահայտչականությամբ ծառայում են նաև նշված օրինակում միտումնավոր կերպով քաց թողնված բառերն ու արտահայտությունները (զեղչում), որոնք ընթերցողն իր երևակայությամբ է վերականգնում և հասկանում:

Կրկնված երկխոսությունը հուզում է ընթերցողին այն աստիճան, որ դեռ երկար ժա-մանակ չի լքում նրան հողի ազնիվ սերմնացանի և նահատակի պատկերը՝ ոտքերը մինչև ծնկները քաց, փայտյա կոտը պարանոցից կախ՝ սև ցեների վրա ոսկեհատ սերմեր շաղ տալիս, ինչպես նաև՝ ամեն զոհի պատավ մայրը՝ արցունքն աչքերին, հավատալիս իր որդու կենդանությանը հրաշքին՝ «ուսկի առասպելին»:

Բակունցի ստեղծագործական դիմանկարը և ինքնատիպ ոճը ընդգծում են նաև բա-

ների, կապակցությունների և առանձին նախադասությունների կրկնությունները: Այդպիսի կրկնությունները հուզիչ ու քնարական են դարձնում հեղինակի խոսքը: Գրողի պատմըվածքներում հաճախ են հանդիպում նախադասության սկզբում կատարվող բառային կրկնության՝ հարակրկնության օրինակներ՝ ոճական բազմապիսի նրբերանգներով: Ահա «Աքարում» պատմվածքի սկզբի հատվածը.

«Աքար գյուղը գեղանիստ է, շրջապատված անտառներով: **Աքարում** կա քու:

Աքարը հին է՝ անհիշելի ժամանակներից:

Աքարն աղքատ է» (24):

Ակնհայտ է «Աքար» կրկնվող գոյականի ոճական արժեքը, զգալի է պատումի բանաստեղծական ուժը ու ժողովրդական լեզվատաճողության կենդանի շունչը: Ուշագրավ է նաև այն, որ կրկնվում է ոչ միայն գոյականը, այլև շարահյուսական կառույցը: Փոխվում է միայն գյուղին վերագրվող հատկանիշը՝ այն բնութագրելով բազմակողմանիորեն: Սա նաև առօրյա-խոսակցական ոճին բնորոշ շարահյուսական կառույցներից է:

Բանաստեղծական ուրույն կառուցվածք ունի նաև «Գյուլբահարի համար» պատմվածքի սկզբի հատվածը, ուր կրկնության տարբեր տեսակները՝ հարակրկնությունը, վերջույթը (նախադասությունների վերջում կատարվող բառային կրկնություն) նրբորեն ձուլվում են՝ պատումին հաղորդելով համաշափոթություն, ներդաշնակություն և քնքուշ երաժշտականություն: «**Կա մի գյուղ՝** քսան երդիկով, անունը **Դրմբուն:** **Դրմբունը** ձորեր ունի դրճգան, սրածայր քերծեր, մի-մի շիշ փափախ և ձորերում **դրճգան** էշի զոռոցը գիլ արձագանք է տալիս՝ դմբ-դմբ **դրճգան:**

Կա մի գյուղ՝ Դրմբուն, ճանապարհից հեռու, առանց դպրոցի, Դրմբունում մի տերտեր—տեր **Մարուքը** խնուսցի:

Երբ «փաշայի» գաղթականության **պիքը պղտոր**, տարիներ առաջ լափին տվեց Դրմբունի ձորերին և հեռացավ, **պղտոր պիքը դրճգան** ձորերում թողեց մի տաշեղ՝ **խնուսցի** տեր **Մարուքին:**

Դրմբունում կա մի կին՝ Գյուլբահարն այրի, երկու որբատեր, **տունը՝** մեկը քսան երդիկից, տեր **Մարուքի քսան** ծխից— **տունը** գյուղի ծայրին: **Գյուլբահարը՝** մարդաթող, **Գյուլբահարը՝** «գարնան ծաղիկ» (54):

«Դրմբունը նահապետական, վագոնի երես չտեսած, **Դրմբունը՝** առանց երկաթ գոլթանի» (55): Վերը հիշված հատվածի արտահայտչականությանը նպաստում է նաև բառերի՝ մի ղեպքում սովորական, մյուս ղեպքում՝ անսովոր (շրջուն) շարահյուսությունը (տեր **Մարուքը** խնուսցի— խնուսցի տեր **Մարուքը**, պղտոր **պիքը**— **պիքը** պղտոր), ինչպես՝ միևնույն հատվածում և՛ բառերի ու կապակցությունների, և՛ նախադասությունների կրկնությունը: Միաժամանակ կրկնություններով հեղինակը երգիծում է այդ գյուղը և ակամայից ծիծաղելի վիճակի մեջ ընկած իր հերոսներին:

Այս պատկերին երաժշտականություն է հաղորդվում նաև չափածո խոսքին բնորոշ այնպիսի ոճական հնարանքի կիրառմամբ, ինչպիսին է նույն բաղաձայնի և նույն ձայնավորի գեղագիտական արժեք ունեցող կրկնությունը՝ բաղաձայնույթ և առձայնույթ: Վերոհիշյալ պարբերությունում այդպիսի կրկնվող հնչյուններ են «դ»-ն, «գ»-ն և «ա»-ն, որոնց արտահայտչական արժեքը ուժեղանում է նրանով, որ բառը կազմող այդ հնչյունները որոշ չափով ներդաշնակում են նկարագրվող երևույթներին: Խոսքը մասնավորեցնելով՝ նշենք, որ «ա»-ն առհասարակ, հայերենի ամենահաճախական ձայնավորն է: Այս հանգամանքն Աճառյանը իրավացիորեն համարում է հայերենի երաժշտականության պատճառներից մեկը:

Ահա գոյականով արտահայտված հարակրկնությունների այլ օրինակներ, որոնց բանաստեղծական կառուցվածքն ու քնարական շունչը չի կարելի չնկատել. «**Աճճրե** եկավ, ձյուն ու քամի, **անձրևը** ծեծեց **հճճանի** պատերը, և **հճճանները** հավասարվեցին **հողին**, ինչպես խաղողի այգու թմբերը:

Հճճաններից էլ մնաց **հիշողություն...**» (50): Այս օրինակում հեղինակային խոսքի հմայքին նպաստում է նաև միևնույն բառի (տվյալ ղեպքում՝ **հճճան**) քերականական տարբեր ձևերով գործածությունը:

Կամ «... **Քարերը** տեղահան արին, և ժածքի մի գիշեր **գմբերը** փլվեց, **քարերն** ընկան **Քասախի** մեջ, գետը փրփրաց և ծածկեց **քարերը...**» (50): Առաջին օրինակում «ձ» և «հ» բաղաձայնների կրկնությամբ լսելի է դառնում անձրևի, իսկ երկրորդ օրինակում «ք» հնչյունի կրկնությամբ՝ տեղահան եղող և դեպի գետը գլորվող քարերի ձայնը: Իսկ «ա» ձայնավորի կրկնությունը հավասարապես նպաստում է նշված օրինակների քնարականությանը:

Միևնույն բառը կրկնելով մեկ տողի սկզբում, մեկ վերջում՝ հեղինակն իր խոսքը մասնաձայնությամբ դարձնում է ավելի ներգործուն ու մեղեդային: Օրինակ՝ «**Քարեր** շատ,

ճախերով քարեր՝ ճուղ ու ողկույզներով, քարեր՝ քամուց արևից գիրը տեղ-տեղ խան-
գարված քարեր» (51): «Ք» հնչյունի կրկնությամբ առարկայական ու շուշափեյի է դառնում
պատկերը, որի արտահայտչական արժեքը բարձրացնում է նաև «քարեր» գոյականի որո-
շիչ լրացումների ետադասումը: Եթե փորձենք բոլոր լրացումները կուտակել մի դիրքում,
կտեսնենք, թե որքան անարտահայտիչ է դառնում խոսքը:

Բակունցի լեզվում, ինչպես տեսնում ենք, նկատելի է մի օրինակափոխություն. գրողը
քառերի կրկնությանը համարյա միշտ զուգակցում է հնչյունների կրկնությունը, որոնց
նուրբ հյուսվածքից ծնվում են բակունցյան լեզվի անկրկնելի գրավչությունը, որոնք, հա-
մատեղ գործածվելով, հեղինակի խոսքը նմանեցնում են երածշտության՝ լի նուրբ ու քըն-
քուշ ելևէջներով:

Գրողի պատմվածքներում կրկնվում են նաև քառերի կապակցությունները: Օրինակ՝
«Առավոտյան գյուղի մեյդանում, կաղնու շվաքի տակ, ուր ամսան շոգին նախիրից ետ
արած հորթերն են դինջանում, կաղնու շվաքի տակ, գեղական ժողովը որոշում է տեղ
Մարտիին գյուղից հանել» (56): Այս կրկնությամբ շեշտվում է հատկապես այն վայրը,
ուր տեղի է ունենում գյուղական ժողովը:

Հեղինակը հարազատ է մնացել ժողովրդական լեզվամտածողությանը, և դա շնորհիվ
ոչ միայն բնորոշ կրկնության, այլև նրա խոսքին ժողովրդական համ ու հուտ տվող դարձ-
վածային արտահայտության (ետ արած-նախիր չգնացած, չուղարկած), քարքառային քա-
ռերի ու քառածների (դինջանակ և գեղական) օգտագործման:

Առօրյա-խոսակցական երանգ ունի հետևյալ կրկնությունը. «Գյուղի մեջտեղ, ժամից
քիչ հեռու Մրոցի խրճիթ-ընթերցասարահն է:

Գյուղի մեջտեղ, հինավուրց ժամը, ժամի դրան հարյուր տարվա թրիք» (84): Բառա-
կապակցությամբ արտահայտված կրկնությունը նպաստել է արտահայտվող մտքի ուժգ-
նությանը:

Բակունցը սիրում է ոճական տարբեր նպատակներով կրկնել նաև նախադասություն-
ները: Հեղինակի խոսքում հաճախ են հանդիպում նախադասությունների պարբերական
կրկնություններ նույն պատմվածքի տարբեր հատվածներում: Այս առումով ուշագրավ է
«Բրուտի տղան» պատմվածքը, որի հերոսը՝ Անդոն, գյուղական թովիչ քնաշխարհում է
ծնվել ու մեծացել, մաքուր է ու պարզ, ինչպես մայր քնությունը: Պատմվածքի այն հատ-
վածը, ուր նկարագրվում է հեղափոխական շարժմանը հարած ու նվիրյալ հերոսը, աչքի
է ընկնում հետևյալ խոսու ու պատկերավոր արտահայտությամբ. «Ստաղաղություն խրճիթ-
ներից, պատերազմ պայտաներին...»:

Այս նույն խոսքը հեղինակը կրկնում է պատմվածքի վերջում և ավարտում «անկրկնելի
օրերի» մասին իր գրվածքը, կրկին հաստատելով, որ գենքն ու պատերազմը միայն ող-
բերգություն են բերում խաղաղություն: Ընդ սիրող, գենքն ու կոնվը առող խեղճ ժողովրդին,
որ բոլոր պատերազմներն էլ նյութվում են «պալատների» կամքով և բխում նրանց շահե-
րից, քայց միշտ տուժում են խաղաղության սիրահար խրճիթները:

«Սև «հացը» պատմվածքում կնոնի հիշողությունները և անմոռաց սերը Լուսիկի հան-
դեպ տպավորիչ ու ազդեցիկ է դարձնում հետևյալ նախադասության կրկնությունը. «Ծաղ-
կած ծիրանների փողոցը...», որից սկիզբ է առնում ողջ պատմությունը: Եվ նախադասու-
թյունը վերջացնելով ոչ թե վերջակետով, այլ կախման կետերով (սա ևս Բակունցի ոճի
բնորոշ կողմերից է), հեղինակը սրում է զգացմունքայնությունը, լիրիկական քնքրություն
ու բույր հաղորդում ասածին: Ծնորհիվ կրկնության վերհուշն այնքան քնակն ու կենդանի
է հնչում, որ ընթերցողը ևս դառնում է ծաղկած ծիրանիների փողոցում ծնված սիրո պատ-
մության ակնատեսը: Այդ փողոցը լուս վկան է նրանց սիրո, որից մնացել է «չինչ հի-
շողությունը և մի կակիծ, որ երբեմն մրմուն է, ինչպես ոտքի սպին» (175):

Կրկնության վերոհիշյալ տեսակը երբեմն զարդարում է նաև հերոսների խոսքը: Դս
նպաստում է նրանցից յուրաքանչյուրի մտածելակերպի ու հոգեվիճակի քացահայտմանը:

Հեղինակային խոսքում հանդիպում են նաև միևնույն պարբերության մեջ կատարվող
նախադասությունների կրկնություններ: Օրինակ՝ «Պետին տեսավ նրան ձիու վրա, պսպղան
ակնոցն աչքին, փայլուն կոկարդը ճերմակ գլխարկի վրա: Պետին տեսավ և ճանաչեց
նրան» (էջք 33—34): Նախադասությունների կրկնությամբ այս դեպքում ընդգծվում են
Պետին համակած տազնապն ու նրա հոգեվիճակը:

Ընդգծված հույզ ու զգացմունք կա սույն օրինակում. «Ես ճանաչեցի Խոնարհին...
Աչքերն էլի առաջվանն էին, քայց առանց փայլի: Ես ճանաչեցի Խոնարհին: Բայց չգիտեմ,
նա ի՞նչ ճանաչե՞ց, թե ոչ» (129):

Տարբեր խոսքի մասեր օժտված են ոճական տարբեր առանձնահատկություններով,
այդ է պատճառը, որ դրանցից յուրաքանչյուրի կրկնությունը յուրովի է զարդարում խոսքը
և զանազան նրբերանգներ հաղորդում նրան:

Բերենք բայական հարակրկնությունների օրինակներ և ցույց տանք, թե դրանք ո՞՞նչ կան ինչպիսի արժեք ունեն: «Կա ձեռնվա ճանապարհ, որ անցնում է արևկող տեղերով, կա գարնան ճանապարհ, կա այծի արահետ...» (149): Այս օրինակում բայի կրկնությամբ արտահայտվում է շատության իմաստ (տվյալ դեպքում՝ ճանապարհների):

Կամ՝ «Կա և թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և՛ տըխուր հեկեկում է, կա և՛ ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, ելնում է ծովը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի» (115): Այստեղ կրկնվում են բայը (կա, կան), «և» համադասական շաղկապը՝ ուժեղացնելով խոսքի հուզական տպավորությունը և արտահայտիչ դարձնելով այն:

Բակունցը երբեմն խոսքի հուզականությունը մեծացնում է միևնույն հատվածում տարբեր խոսքի մասերի կրկնությամբ (ինչպես վերևի օրինակում). «Մարդ մոռանում է անունը, տեղն ու տարին, թե երբ է տեսել այդ գլուխը, աչքերը. մոռանում է մանրամասնությունները, սակայն մնում են միայն գլուխը, աչքերը» (118):

Գրողի պատմվածքներում հաճախ են հանդիպում դերանունների կրկնություններ: Հետևյալ օրինակում «նրանք» անձնակազմի դերանվան կրկնությամբ խոսքը ձեռք է բերում ուժգնություն և հանդիսավորություն, միաժամանակ ընդգծվում են դեպի քաղաք գնացող մարդկանց և ձիերի անվերջ շարքերը. «Նրանք իջնում էին բարձր լեռներից, որոնց գուգերում, ինչպես լեռնային արծվի բնեղը, ծվարել են քարակոփ գլուղերը: Նրանք ելնում էին մթին ձորերից, ուր խավար խեղճություն կար: Նրանք գայիս էին բարձրավանդակի տափարակից, որի մեջտեղը աղամանդի մնաց ջինջ լիճ...» (207):

Այլ դեպքերում կրկնված դերանունները ստանալով տրամաբանական շեշտ՝ ընդգծում են իրենցով սկսվող մտքերը: Բակունցի պատմվածքներում շատ են այդպիսի օրինակները, ուր կրկնվող դերանունները նպաստում են իմաստի սաստկացմանը և ուշադրություն գրավում:

Բերենք օրինակներ. «Այս մեր գյուղի, մեր Գյունեյ թաղի թիկունքն է» (141), «Այս չոր ծիրանի տակ նստած, գարնան այս պայծառ օրը, երբ ուրախ արևը մեղմվել է քարերի մոալլությունը, ես գրում եմ իմ մանկության, ծիրանի ծառի և իմ ընկեր Անդրյի մասին» (150), «Հանդից տուն դարձողները՝ որը մի խորձ խոտ շալակին, որը՝ էշի վրա, ոտները գետնին քսելով» (181), «Ժխորի մեջ ոչ ոք ուշ չէր դարձնում նրա վրա, ոչ ոքի մտքով չէր անցնում, որ Պետու (սիրտը թրթրում էր, հենց բժիշկը մոտենում էր մի կովի և ավելի երկար սկսում գննել)» (39):

Հեղինակի ոճին բնորոշ է նաև այն կառույցը, երբ նախադասությունը սկսվում է «ահա» եղանակիչով: Վերջինս կրկնվելով՝ առանձին ուշադրության է արժանանում, և գրողի խոսքը դառնում է ուխմիկ: Այդպիսի կրկնություններով հարուստ է հատկապես «Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքը: Օրինակներ՝ «Ահա ճահճուտներից բարձրանում է տաք գուրդիչին:

Ահա մեկը հենվել է հեռագրասյունին և անշարժ է:

Ահա լուսավորվեցին այս փողոցի ծառերը:

Ահա «արձիճե» քանակը:

Ահա փողոցը հեղեղում են գործավորները, մեքենագրուհիները, հաշվապահները, վիճակագիրները: (219—220)

Կարելի է դեռ երկար շարունակել, քայց քերված օրինակներն էլ վկայում են, թե հեղինակը այդ կրկնությամբ որքան կենդանի ու իրական է դարձրել Աստաֆյան փողոցի բոլոր գույներն ու նրա բնակիչներին:

Գրողի անհատականությունը երևում է նաև կրկնության այն տեսակի գործածության մեջ, որը կոչվում է շղթայակցում, «Երբ կարևոր գաղափար արտահայտող որևէ բառ, կապակցություն կամ նախադասություն հնչեցնելով առանձնացվում է և դարձվում ելակետ հաջորդ մտքերի կամ նախադասությունների համար»⁴:

Այդպիսի կրկնությունների շնորհիվ Բակունցի խոսքը ձեռք է բերում վեհություն և արտահայտչականություն: Օրինակներ՝ «Մարդիկ մի պահ մոռացել էին իրենց ձիերը, որոնց զինվորները կապել էին փշալարի ցանկապատի հետևը,— մոռացել էին, որ ձիերի սանձերն ու չվանները շալակած, ոտքով պիտի բարձրանային դեպի լուռ գյուղերը, որոնց դաշտերում այնև չէին վրճալու փշալարով անջատված ձիերը» (212), «Նրան թվում էր, թե Աստաֆյանը մի անմարդ այգի է, որտեղ ծառերը բուսել են սուվերի և հառաչանքների

⁴ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Բ. 2, Երևան, 1991, էջ 115:

համար: **Մի անձարդ այգի**, որտեղ նրան սպասում է մի մանկահասակ աղջիկ և միամիտ մի գրույց» (228), «Նրա հիշողության խավար անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում: **Այն օրը**, երբ Սոնան սրունքները կախել էր առվակի վրա և ծիծաղում էր...» (236): Առաջին երկու օրինակներում կրկնվող բաղադրիչը նախադասություն է, իսկ վերջինում՝ բառակապակցություն: Դրանք ուժեղ շեշտվելով՝ գրավում են ընթերցողի ուշադրությունը և ունեն հուզական բովանդակություն:

Բազմաշաղկապությունը՝ նույն շաղկապի կրկնությունը, նույնպես գրողի խոսքում ոճական զանազան դրսևորումներ է ստանում: Լեզվին շատ վաղուց հայտնի ոճական այս հնարանքը Բակունցը հաջողությամբ է օգտագործում: «Ծիրանի փողը» պատմվածքում կրկնվող շաղկապների հաճախակի գործածությամբ ընդգծվում է շիկացած ժամանակաշրջանը և հայ մարդուն բաժին ընկած դառն ճակատագիրը: Ասածը հաստատենք օրինակներով՝ «Նրա սերունդը տեսել է և՛ հուր, և՛ պատերազմ, և՛ ջարդ, և՛ գաղթ»: Երբ նրանք թշուժ էին հարավից, խիում էին և՛ հարավից, և՛ հյուսիսից» (110), «Հազրոն առավ իր կնոջն ու աղջկան և ծերպերով, քարայծի արահետներով անցավ լեռից-լեռ, քարանձավից-քարանձավ, կերպ ընդեղեն, և՛ այլոճ, և՛ մասուր,— ապա հոգնած, ահը աչքերի մեջ գնաց հարավի կողմը, գնաց մերթ իբրև քուրդ հովիվ, մերթ իբրև քաղցած գայլ և հասավ անձանոթ մի աշխարհի, որտեղ ոչ լեռներ կային, ոչ լեռնային լույս աղբյուրներ» (112), «Վրակը լավեց և՛ սերմ, և՛ սերմնացան» (112): Բերված օրինակներում «և», «մերթ», «ոչ» համադասական շաղկապների կրկնությամբ շեշտվում է յուրաքանչյուր բառային միավոր առանձին, և խոսքը ներգործության մեծ ուժ է ստանում: Հետևյալ օրինակներում կրկնվող (մերթ, և) շաղկապները ընդգծում, առանձնացնում են թվարկվող միավորները, խոսքին հաղորդվում է սաստկական երանգ. «Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ասի էր շարտում մերթ սև թավիչե զխարկով մի գլուխ, մազերը կարճ կտրած, մերթ երկարագզեստ մի կնոջ, թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ...» (195): «Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր և՛ սիմիդրի տերևների խշռոցը, և՛ վագրի օրորը, և՛ հնձանի դրոնակի երգը» (229):

«Ոչ» շաղկապի կրկնությունը ուժեղացնում է ժխտման իմաստը: Օրինակներ՝ «Հնագետը չէր տեսնում ո՛չ մանուշակ, ո՛չ խոտ» (192), «Զի շարժվում և ո՛չ մի տերև, ո՛չ մի ծառ» (218): Այսպիսով, Բակունցի նախասիրած կրկնության տեսակն է հարակրկնությունը, թեև ինչպես տեսանք, հանդիպում են նաև կրկնության այլ տեսակներ, որոնց վարպետ ու բարձրարվեստ գործածությամբ ցայտուն դրսևորում է ստանում անկրկնելի գույներով, բանաստեղծականությամբ ու հուզականությամբ հագեցած բակունցյան խոսքը:

Н. В. НЕРСИСЯН — *Стилистическое значение повторов в рассказах А. Бакунца* -- В статье впервые на основе богатого фактического материала, почерпнутого из рассказов Бакунца, анализируются стилистические выразительные возможности приема повтора, случаи его применения в речи автора и героев и эмоциональной нюансировки. Тем самым выясняются некоторые черты индивидуального стиля писателя.